

րախը վարակիչ յատկութիւնից գոյափոխութեւս սակաւ առ սակաւ ի հակ—վարակիչ յատկութիւն, ուրեմն հիմն չկայ ենթադրելու, թէ նոյնը չի կարող պատահել եւ բոլոր միւս թարախների ամեն էպիդեմիքական վարակիչ ցաւերի հետ, այսինքն որպէս զի բոլոր այդ թարախները չկարողանային վարակիչ յատկութիւններից փոխվել ի հակավարակիչ յատկութիւն: Եւ եթէ նորանք կարող են, եթէ հաւի խօլեռայի թարախը բացառութիւն չէ հասարակ կանոնից, ուրեմն այդ եպիդեմիայի բժշկելու կերպը եւս (այսինքն նորա պատուաստելը) չէ բացառական կերպ, ընդ հակառակը նա պէտքէ լինի ընդհանուր եւ ամեն միւս էպիդեմիաների համար:

Թուէն եւ Պաստեր շարունակում են իւրեանց հետաքրքրական փորձերը եւ հետազօտութիւնները. կհաստատուին արդեօք նոր փաստերով նրանց արդէն ձեռք բերած հետեւանքները թէ ոչ՝ ցոյց կտայ ապագան: Այնու ամենայնիւ չի կարելի չիստատուանուիլ նոցա գիւտերի ահագին գիտնական եւ գործնական վսեմութիւնը:

(Թարգմ.)

Զ. Տէր Զատարեանց.

ԱՆԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ ԶՂԶՈՒՄՆ ԵՒ ԴԱՐՁՂ.

Ինչպէս յայտնի է, թէ հեթանոսութեան դարերում և թէ քրիստոնէութեան ժամանակ պատահել են երբեմն մարդիկ, որք ընկել են անաստուածութեան մէջ, Դորա կղել են ըստ մեծի մասին գիտնական փիլիսոփաներ, որք խուլ մնալով իւրեանց հոգեկան զգացմունքներին — աստուածաճանաչութեան գլխաւոր աղբիւրին, կամեցել են պաղ մտքի վերացական քննութիւններով և հետազօտութիւններով որոշել թէ ի՞նչ է Աստուած, և չկարողանալով հասնել այդ բանին՝ եկել են այն սխալ եզրակացութեան թէ չկայ ուրեմն Աստուած: Անաստուածութեան մոլորութիւնը առանձին զարգացումն ստացաւ ի միջի այլոց և անցեալ դարու փիլիսոփայութեան մէջ, մանաւանդ ֆրանսիացի Վօլտերի և իւր համամիտ հետեւորդների ջանքով:

Բայց նոյնպէս յայտնի է որ՝ այդպիսի փիլիսոփայ անաստուածներից մեծագոյն մասը ամեն ժամանակ ծանր տարաբախտութիւնների մէջ և մանաւանդ մահու առաջ և միշտ զղջացել են և դարձել ճշմարիտ աստուածապաշտութեան: Այն մարդիկ, որք իւրեանց բոլոր կեանքի ընթացքում բանիւ և զրով քարոզել են եռանդով և համարձակութեամբ թէ չկայ

Աստուած, չկայ հոգի, չկայ հանդերձեալ կեանք, և յաջողիլ են մոլորեցնել նաև ուրիշներին, մօտենալով մահին զղջացել են ինքեանք, յիշել են Աստուած, յիշել են հոգի, սկսել են հոգալ իւրեանց հոգու փրկութեան մասին, խօսքով և մանաւանդ իւրեանց ազգու օրինակով յորդորելով ուրիշներին չընդունել նոցա սխալ վարդապետութիւնը, չընկնել նոյն կործանիչ մոլորութեան մէջ:

Ներկայ դարու սոյդալիսի գիտնական անաստուածների շարքում ամենանախաճարներից մէկն էր ֆրանսիացի Էմիլ Լիտտրէ, երևելի գիտնական և փիլիսոփայ, որ վախճանուեցաւ Փարիզում այս տարի (Մայիսի 21-ին) 81 ամեայ հասակի մէջ: Մահու վերջին ժամերում սորա զղջումն և դարձը դէպի աստուածապաշտութիւնը և քրիստոնէութիւնը շատ մեծ ազաւորութիւն գործեց Փարիզի և բոլոր աշխարհի անհաւատների և անաստուածների վերայ: Լիտտրէն գլխաւոր ներկայացուցիչն էր և եռանկուն պարագլուխ ներկայի այն փիլիսոփայական վարդապետութեան, որ չէ հաւատում Աստուծուն և մերժումէ հոգու գոյութիւնը և հանդերձեալ կեանքը: Սա իւր բազմութիւ շարագրութիւններով շատ նպաստեց այդ հոգեկորոյս մոլորութեան տարածման թէ՛ գիտնականների և թէ՛ սոցէտների մէջ, մանաւանդ որ՝ նորա ընդարձակ գիտնականութիւնը և բնաւորութեան այլ ազնիւ յատկութիւնները մեծ հեղինակութիւն էին տալի նորա խօսքին: Նորա կինը և աղջիկը միշտ մնում էին ջերմ քրիստոնեաներ և թէպէտ անընդհատ յորդորանքներով և մեծ ջանքով աշխատում էին դարձնել նորան, բայց նա իւր բոլոր կեանքում չէր համոզվում, թէ և միւս կողմից ինքն Լիտտէն երբէք չէր աշխատում մոլորեցնել և նոցա, այլ միշտ ներողամտութեամբ և յարգանքով էր նայում նոցա քրիստոնէական հաւատի և հայեացքների վերայ: Պատմում են թէ մի անգամ, քանի մի տարի սորանից առաջ, Լիտտրէն յանկարծ ուշաթափ եղաւ, և նորա կինը կարծելով թէ հասել է նորա վախճանը՝ կախեց նորա կուրծքի վերայ Աստուածածնի փոքրիկ պատկերը: Երբ նա ուշի եկաւ, հանեց հանդարտութեամբ և մեծ պատկառանքով պատկերը, յանձնեց իւր կնոջ համբուրելով նորա ձեռքը: Լիտտրէի կինը երբէք չէր կորցնում իւր յոյսը թէ՛ երբ և իցէ նա կզղջայ և կզառնայ, և չսխալուեցաւ Էմիլ Լիտտրէն մեռաւ քրիստոնեայ:

Լիտտրէն վարումէր միշտ կատարեալ ճղնաւորական կեանք, Համեստ բնակարանը և ամեն կողմից չափաւոր կեանքը — ահա նորա կանոնը, նա աշխատումէր գիշեր ցերեկ իւր գիտնական պարագմունքներով: Չորս, նիհար, մաշտած դէմքը, զաղկացած, զեղին գոյնը, մանր մոխրագոյն աչքերը հեզ նայուածքով, կախնկած ցածր շրթուքը — ահա Լիտտրէի թոյնը կերպարանքը, որով անձանօթները համարումէին նորան կամ մի ժամկոչ և կամ խելացիոր մարդ:

Աւրբաթ օրերը Լիտտրէի տան մէջ ամենքը պաս էին պահում, իսկ կիրակի օրերը ոչ ոք չէր կարող բանել, նորա տան մէջ երբեմն երբեմն

աշխատող հիւսնը պատմումէր Լիտտրէի մասին թէ. «Ո՞վ կհաստատայ որ՝ այդ ծերունին՝ որը ոչինչ բանին չէ հաւատում, չէ թոյլ տալի իւր տան մէջ անգամ մի բեկու (մեխ) ցցել պատի մէջ կիրակի օրը»:

Լիտտրէն գործումէր շատ բարեքնիւր, բայց գործումէր լուռ առանց հռչակելու առանց յայտնելու: Նորա մասին կարելի էր ասել թէ՝ խելքով անասուած էր, իսկ սրտով կատարեալ քրիստոնեայ: Յանկալով օգնել միշտ խակական աղքատներին և կարօտեալներին, նա միշտ զիմուժ էր ծխատէր քահանային, որին տալիս էր փող երբեմն նաև եկեղեցու զարդի և բարեխաղալութեան համար: Երբ նա հիւանդանումէր, նորան միշտ պահպանումէին վանքի կոստանք, ի մեծ զժողովութիւն և զայրոյթ համամիտ անաստուածներին:

Իւր մեռնելուց վեց ամիս առաջ Լիտտրէն ծանօթացաւ Փարիզի ամենալուսաւորեալ և ամենահռչակաւոր Գիւլիէին քահանայի հետ: Շուտով այդ քահանայի այցելութիւնները զարձան անհրաժեշտ պիտոյք ծերունու համար, նա անդադար հրաժիրումէր նորան իւր մօտ, գրեթէ չէր կորուզանում ապրիլ առանց նորա: Գիւլիէինը, ղեռ ևս երիտասարդ մարդ, առաջներն էլ ծանօթութիւն էր վարում Լիտտրէի հետ իրրեւ նորա նախկին աշակերտ: Նոցա վերջին ժամանակների յաճախ և երկարատե խօսակցութիւնները չմնացին առանց բարի հետեանքի: Զառամեալ ծերունին, այդ գիտնական անաստուածը, սկսեց եռանդով կարգաւ կրօնական գրքեր և ամենից առաջ քրիստոնէական վարդապետութիւնը: Վատարեալ տղէտ լինելով քրիստոնէական կրօնի գիտելիքների մէջ՝ նա դանումէր այդ գրքերի մէջ ամեն քայլափոխում բարձր ճշմարտութիւնների, որոց զոյութիւնը անգամ չէր ենթադրում նա մինչև այդ ժամանակ: Վարդալով գիրքը և վերադարձնելով այն Գիւլիէին քահանային, Լիտտրէն սովորաբար չէր յայտնում իւր կարծիքը, բայց միանգամ Վարք սրբօցը կարգալուց յետոյ նա ասաց. «Այդ մարդիկը, արդարև, աւելի լաւ են և աւելի բարձր մեղանից»:

Լիտտրէի մահուան օրը Գիւլիէին քահանան դարձեալ այցելեց նորան: Նորա կինը և աղջիկը և երկու կուսանք աղօթումէին նորա անկողնու մօտ: Հիւանդը ղեռ ևս ունէր կատարեալ միտք և հասկացողութիւն. տեսնելով քահանային՝ նա ժպտաց մի պայծառ ժպտով: Եւ Էմիլ Լիտտրէն մեռաւ զղջալով և դառնալով զէպի քրիստոնէութիւնը և ընդունելով սուրբ հաղորդութիւնը:

Աւելացնենք և հետեւեալ նշանաւոր փաստը: Լիտտրէն մի քանի տարի առաջ գրել էր կտակ՝ պատուիրելով որ՝ թաղեն նորան առանց եկեղեցական ծիսի: Այդ կտակի պատճէնը պահ էր տուել իւր մտերիմներից մէկին, որ Ֆրանսիայի այժմեան նախարարութեան անգամ է: Իւր մահից չորս օր առաջ Լիտտրէն պատուիրեց բերել իւր կտակը և նորա պատճէնը և այրել տուեց իւր աչքի առաջ: Յետոյ նա գրել տուեց նոր կտակ, որով խնդրեց իւր թաղումն կատարել քրիստոնէական ծէսով:

Էմիլ լիտորէի նման երեւիլի գիտնական և փիլիսոփայ անաստուածի այդպիսի յայտնի և հանգիսաւոր զղջման և դարձի մէջ կայ անշուշտ Աստուծոյ անսահման զթուծեան ազդեցութիւնը: Եւ Լիտորէի դարձը թո՛ղ լինի խորհրդաւոր և փրկարար օրինակ նորա նմանների համար:

* * *

ՊԱՆԳՈՒԽՏՆ ԱՌԻ ԼՈՒՍԻՆ.

Եկաւ երեկոյ, ամեն ոք իւր տուն
Դիմէ քաղցրադէմ հետ իւր սիրելի ոյն,
Պանդուխտն ո՛ր գնայ, առ սփ մխիթարի,
Մահն յԱստուծոյ է, բաժանումն ուստի՞:
Լուսինն ինձ բնկեր նոյն և մխիթար,
Բայց նա էլ է գնում չունի ինչ դագար,
Դշխոյդ զիշերոյ, կաց, ա՛ռ իմ ողջոյն,
Տա՛ր ու նուիրէ Հայրենեացս հողոյն,
Կաց, լուսին մեղմիկ, մի՛ փախչիր արագ,
Ա՛ռ իմ հառաչանքս և սէրս քաղցրանուագ,
Տա՛ր իմ Հայրենեացս սերտ բարեկամաց,
Յայտնիր իմ փափագ խորին զգացմանցս,
Ո՛ր քաղցրիկ տեսոյն կարօտով մաշիմ,
Նորա զաւակունք հարազատք են իմ,
Նոցա սուրբ սիրով այրիմ զէտ հրով,
Իմ սրտի հրդեհն չբմարի ջրով,
Թէ յօտարութեան լինիմ ես արքայ,
Լաւ էր ինձ ասեմ Հայրենեացս շղթայ,
Թէ տան ինձ փառքեր մեծամեծ յարգանք,
Լաւ էր ինձ ասեմ հայրենեացս տանջանք,
Թէ ճախ սեղաններ նստիմ պատրաստուած,
Լաւ էր ինձ ասեմ կալ անդ միշտ քաղցած,
Թէ պալատ շքեղ տան ինձ բնակել,
Լաւ էր ինձ ասեմ ինձ անդ բանտարկել,
Թէ իմ անկողին կակուղ փետրալի՝
Լաւ էր ինձ ասեմ անդ զեռնախշտի,
Թէ տան ինձ գինի, քաղցր օշարակներ,
Լաւ էր ինձ ասեմ Հայրենեացս ջրեր,
Թէ միշտ ի զբօսանս երթամ ի հրճուել,
Լաւ էր ինձ ասեմ անդ քրտինք թափել,
Քանի հեռու եմ Հայրենեացս զրկէն
Միշտ զժգոհութիւն կենէ իմ բերնէն: